ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 5-ին տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ակադեմիայի 1976 թ. աշխատանքի արդյունքները և այն խնդիրները, որ այսօր դրված են Հանրապետության գիտնականների առջև։

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— Տասներորդ հնգամյակի առաջին տարում,— ասաց նա,— Հանրապետության դիտական կոլեկտիվների գործունեությունը նպատակամղված է եղել ՍՄԿԿ XXV համագումարի կողմից գիտության և մշակույթի գործիչների առջև դրված խնդիրների հաջող իրականացմանը։ Հատուկ ուշադրություն է նվիրվել գիտական հետազոտությունների արդյունավետության և որակի բարձրացման, գիտության ու արտադրության կապի կատարելագործման, ժողովրդական տնտեսության մեջ գիտական նվաճումների արդյունքների ներդրումն արագացնելու նպատակով կազմակերպական մի շարք միջոցառումների իրականացման հարցերին։ Զգալի հաջողությունների են հասել մասնավորապես ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության, կենսաբանության, կեն.)աքիմիայի պրոբլեմներով, հասարակական գիտություններով զբաղվող մի շարք ինստիտուտներ և լաբորատորիաներ։

Անդրադառնալով ակադեմիայի բաժանմունքների գործունեությանը, Վ. Հ. Համբարձումյանը նշեց նաև հասարակական գիտությունների նշանակալի ներդրումը։ Ինստիտուտների կոլեկտիվները հատուկ ուշադրություն են դարձրել այն հետազոտություններին, որոնք նվիրված են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին, պատմական իրադարձությունների մարքս-լենինյան մեկնաբանման հարցերին։

Այնուհետև Հովսեփ Օրբելու ծննդյան 90-ամյակի կապակցությամբ ընկ. Վ. Համբարձումյանը ասաց.

— Այս տարի մենք նշում ենք մեծավաստակ գիտնական և հասարակական գործիչ Հովսեփ Օրբելու ծննդյան 90-ամյակը։ Լինելով ականավոր հայագետ, կովկասագետ և արևելագետ, Հովսեփ Օրբելին մեծ ավանդ է ներդրել սովետական գիտության զարգացման, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման ասպարեզում։

Ընդհանուր ժողովում Հովսեփ Օրբելու մասին խոսեց ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, *որը նշեց գիտնականի մեծ ծառայությունները սովետական գիտության առջև։ Նա պատմեց Պետական էրմիտաժում Օրբելու գործունեության, արևելագիտության զարգացման ասպարեզում նրա դերի, բազմակողմանի հասարակական աշխատանքի մասին։ Մեծ են Հ. Օրբելու ծառայությունները Հայրենական մեծ պատերազմի տարիներին էրմիտաժի, Լենինգրադի ուրիշ հավաքածուների արժեքները պահպանելու գործում։*

Ակադեմիկոս Պիոտրովսկին մասնավորապես նշեց այն հսկայական եռանդն ու ոգևորությունը, որ ներդրեց Հովսեփ Օրբելին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմավորման, մեր հանրապետությունում բնական և հասարակական գիտությունների զարգացման և ազգային կադրերի պատրաստման ասպարեզում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի նախագահության գլխավոր գիտնական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ա. Բակունցը։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Դ. Ս. Դավթյանը, Բ. Ն. Առաքելյանը, *ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ* Է. Հ. Միրզաբեկյանը, *ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ* Ա. Ի. Ալիխանյանը, *Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամներ* Ա. Բ. Բաղդասարյանը, Գ. Խ. Մարգսյանը։

Ընդհանուր ժողովում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների ամենամյա ավանդական հանձնումը։

Գիտությունների ակադեմիայի բաժանմունքների նիստերում, որոնք տեղի ունեցան ապրիլի 4-ին, քննարկվեցին բաժանմունքների գիտական հիմնարկների 1976 թ. գործունեության հիմնական արդյունքները և լսվեցին մի շարք գիտական զեկուցումներ։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովի եզրափակիչ նիստում ակադեմիայի փոխպրեզիդենտներ ընտրվեցին Ս. Ա. Համբարձումյանը և Ա. Ռ. Հովհաննիսյանը։ Գիտությունների ակադեմիայի նախագահության գլխավոր գիտական քարտուղար ընտրվեց Ս. Ա. Եակունցը։ Ընտրվեցին նաև նախագահության հինգ բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարներ։

Տեղի ունեցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների և թղթակից անդամների ընտրություններ։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Հ. Հ. Վարդապետյանը (ֆիզիկա), Ֆ. Տ. Սարգսյանը (կառավարման պրոցեսներ), Ս. Հ. Վարդանյանը (քիմիա), Ա. Տ. Ղանալանյանը (դրականություն)։

Ակադեմիայի թղթակից անդամներ ընտրվեցին Մ. Ե. Մովսեսյանը (ֆիզիկա), Ռ. Ռ. Վարշամովը (կառավարման տեսություն), Ա. Մ. Պետրոսյանցը (ատոմային էներգետիկա), Կ. Ա. Կոստանյանը (քիմիա), Ս. Գ. Մովսեսյանը (բիոքիմիա), Գ. Ե. Տեր-Ստեփանյանը (երկրաբանություն), Է. Ս. Գաբրիելյանը (դեղաբանություն), Ս. Ք. Ավդալբեգյանը (բժշկություն), Մ. Խ. Քորանյանը (տնտեսագիտություն), Ա. Ա. Աբրահամյանը (լեզվաբանություն)։

Ընդհանուր ժողովին մասնակցում էին ընկերներ Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Պ. Պ. Անիսիմովը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հ. Մ. Բաղդասարյանը, Ռ. Ք. Սվետլովան, Յա. Ի. Խաչիկյանը։

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՆՈՐ ԴԱՓՆԵԿԻՐԸ

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան 1962 թ. սահմանեց Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակ՝ հայագիտության բնագավառում առավել աթի ընկնող գիտական ուսումնասիրությունների համար։

1977 թ. Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի դափնեկիրը դարձավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Կ. Զալոյանը՝ «Հայոց փիլիսոփայության պատմություն» աշխատության համար։

Մեծ է Վ. Կ. Զալոյանի գիտական ժառանգությունը։ 40 տարի է, ինչ նա զբաղվում է հայ փիլիսոփայության պատմության, նրա պարբերացման ու զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրման հարցերով։

Մրցանակի արժանացած աշխատությունը հայ փիլիսոփայության պատմության շարադրանքն է։ Նրա սկզբնավորումից մինչև XVIII դարը ներառյալ։ Աշխատության մեջ հեղինակը բնութագրում է հայ փիլիսոփայության աղբյուրները, նրա նպատը և առնչությունը այլ ժողովուրդների փիլիսոփայության հետ, բացահայտում է պավլիկյանների և թոնդրակեցիների ուսմունքի, «Սասունցի Դավիթ» էպոսի, հայկական նովելի ու առակների, Ֆրիկի սոցիալական պոեզիայի փիլիսոփայական հիմունքները։

Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակը հանձնելու կապակցությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1977 թ. հունիսի 3-ի իր նիստը հրավիրեց Աշտարակի շրջանի Օշական գյուղում։ Նիստը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ներկայացրեց Մեսրոպյան մրցանակի նոր դափնեկիր Վ. Կ. Զալոյանին և նրան հանձնեց դիպլոմ, հուշանվեր և կրծքանշան։ Վ. Կ. Զալոյանի գիտական ժառանգության մասին խոսեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ե. Գ. Աղայանը։ Դափնեկրին ողջունեցին ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դիրեկտոր Ս. Ս. Թովմասյանը, Մատենադարանի ավագ գիտաշխատող Ս. Ս. Արևշատյանը, ՀԿԿ Աշտարակի շրջկոմի քարտուղար Լ. Ա. Հարությունյանը և Օշականի պիոներ-դպրոցականները։

Վերջում շնորհակալական խոսք ասաց Վ. Կ. Զալոյանը։

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ